

# ՍԱՂՄՈՍ 3

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծուն վստահության առավոտյան աղոթք <u>MT նախաբան</u> «Դավթի Սաղմոսը, երբ փախել էր իր որդուց՝ Աբիսուդոմից» (տես՝ 2 Թագ. 15-16)	ՏԵՐԸ օգնում է Իր տառապած ժողովրդին	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Ողբ)	Օգնության համար առավոտյան աղոթք	Հալածանքների մեջ արդարի առավոտյան աղոթք
3:1-2	3:1-2	3:1-2	3:1-2	3:1-2
3:3-6	3:3-4 3:5-6	3:3-4 3:5-6	3:3-4 3:5-6	3:3-4 3:5-6
3:7-8	3:7-8	3:7 3:8	3:7-8	3:7-8

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 3:1-2**  
<sup>1</sup>Տե՛ր, որքա՛ն բազմացան ինձ հալածողները:  
 Իմ դեմ ելնողները շատացել են:  
<sup>2</sup>Շատերն իմ անձի մասին ասում են, թե՛  
 «Սրան Աստուծոց օգնություն չկա»: Սեյա:

- 3:1-2** Սաղմոսերգուն զգում էր որոգայթի մեջ, շրջապատված թշնամիներով (BDB 865 III):
1. նրանք շատացել են (տես՝ Սաղմ. 3:6)
  2. նրանք ելնում են

3. նրանք ասում են

Ուշադրություն դարձրեք «շատ» (BDB 9121) բառի կիրառությանը: Անգամ արդարի աստվածավախի համար խնդիրներ են լինում (իրական և երևակայելի) այս մեղավոր աշխարհում: Սաղմոսները ընթերցողին ուզում են փոխանցել հավատքի աշխարհայացք (այսինքն՝ հավատքի աչքեր, տես՝ 4 Թագ. 6:17): Սաղմոսի շարունակությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻ ներկայությունն ու հոգածությունը:

Հնարավոր է գարմանաք, թե ինչպես կարող է այս ողբը գործել՝

1. մեր օրերում
2. մեր հավատքի խմբերում

Արդյո՞ք այն մարդիկ, ովքեր համաձայն չեն մեր հետ, Աստծո թշնամիներն են: Կարծում ավելի լավ է սաղմոսները գործածել որպես Աստծո հանդեպ հավատքի, վստահության քաջալերության խոսքեր, քան որպես հարձակում այն մարդկանց վրա, ովքեր համաձայն չեն ինձ հետ: Իրական թշնամիները նրանք են, ովքեր մերժում են Աստծուն և Նրա Քրիստոսին:

**3:2 «իմ անձ»** Սա եբրայերեն *nephesh* (BDB 659, KB 711-713, տես ամբողջական գրառումը Ծննդ. 35:18-ում, առցանց) բառն է, որը ցույց է տալիս օդ շնչող կենդանի (այսինքն՝ կապված է եբրայերեն շունչ և հոգի բառերի հետ): Այն գործածվում է մարդկանց համար (տես՝ Ծննդ. 2:7) և գազանների (տես՝ Ծննդ. 1:24, 2:19):

Մարդիկ հանդիսանում են թե՛ այս ստեղծագործության մի մասը, և թե՛ ստեղծված են Արարչի պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27): Մենք ունենք թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր բաղադրիչ մաս:

❖ **«Սելա»** Նկատեք, որ այս տերմինը դրված է լուսանցքում, ըստ երևույթին երգչախմբի խմբավարի համար, Սաղմ. 3:2,4,8-ում: Արմատը հայտնի չէ: Ահա մի քանի տեսություններ՝

1. Պարսկերեն «երգ» բառի արմատից
2. Եբրայերենի օր (BDB 699) «բարձրացնել» արմատից, այսինքն՝ ավելի վեր բարձրություն:
3. Եբրայերենի փշ (BDB 663) արմատից, որը նշանակում է «ընդմիշտ», որը գործում է որպես «ամեն»:
4. LXX-ից մատնացույց է անում երաժշտական գործիքների դադար:

Բոլոր այս տեսություններով հանդերձ ակնհայտ է, որ ժամանակակիցները չգիտեն, թե ինչ նկատի ունեն Սաղմոսագիրքը: Այն կիրառվում է ավելի քան 70 անգամ MT-ում և ավելի քան 90 անգամ՝ LXX-ում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 3:3-6**

<sup>3</sup>Բայց Դու, ով ՏԵՐ, Դո՛ւ ես իմ ասպարը,  
 Իմ փառքն ու իմ գլուխը բարձրացնողը:  
<sup>4</sup>Իմ ձայնով ՏԻՐՈՉԸ կանչեցի,  
 Ու Իր սուրբ լեռից ինձ լսեց: Սելա:  
<sup>5</sup>Ես պառկեցի ու քնեցի.  
 Արթնացա, քանի որ Տերն ինձ նեցուկ եղավ:  
<sup>6</sup>Չեմ վախենա ես բյուրավոր ժողովուրդներից,  
 Որոնք իմ չորս կողմն են պատել:

**3:3-6 «ով, ՏԵՐ»** Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

❖ **«Դու . . . ես»** Սաղմոսերգուն թվարկում է մի հավատացյալի համար ՅԱՀՎԵԻ անձի ու գործերի հզոր պատկերներ՝

1. վահան՝ Սաղ. 3:3 – Ծննդ. 15:1, 2 Օր. 33:29, 2 Թագ. 22:3, Սաղմ. 28:7, 33:20, 59:11, 84:11, 115:9, 10, 11, 119:114, 144:2 (նաև ուշադրություն դարձրե՛ք՝ 1 Պետ. 1:5):
2. իմ փառքը, Սաղմ. 3:3 – Սաղմ. 62:7  
 ա. պատիվ

- բ. հաղթանակ
- 3. բարձրացնում է իմ գլուխը, Սաղմ . 3:3
  - ա. հաղթություն պատերազմում
  - բ. դատարանում դատավորի կողմից ընդունված լինել
  - գ. փրկություն մահից
- 4. պատասխանում է իմ աղոթքները, Սաղմ . 3:4
- 5. պահպանում է ինձ, Սաղմ . 3:5
- 6. չի թողնում, որ վախենամ, Սաղմ . 3:6

**3:4 «Իմ ձայնով ՏԻՐՈՋԸ կանչեցի»** Այս օգնության համար աղոթքը կարող է լինել Սաղմ . 3:7ա: «Նա ինձ պատասխանեց»-ի հետևանքները երևում են Սաղմ . 3:7բ-8:

❖ **«Իր սուրբ լեռից»** Սա վերաբերում է տաճարին, որտեղ ՀԿ-յան այդ տեղանքում, ՅԱՀՎԵՆ բնակվում էր ուխտի տապանակի վրա *Քերույթեների* թևերի միջև: Սա այն վայրն էր, որտեղ երկինքն ու երկիրը հանդիպում էին (հոգևորն ու ֆիզիկականը):

**3:5** ՅԱՀՎԵՆ ներկայության, խաղաղության և պաշտպանության շնորհիվ է հնարավոր հանգիստ քունը (տես՝ Սաղմ . 4:8, Առակ . 3:24): Սաղմոս 3:5ա դարձվածք է հանգիստ գիշերային քնի համար: Սա հնարավոր է ՅԱՀՎԵՆ, Նրա ներկայության, Նրա խոստումների, Նրա բնավորության վրա մարդու հավատքի և վստահության շնորհիվ:

**3:6** Սա այլաբանական դարձվածքային լեզու է: «Տաս հազար» տերմինը (BDB 914) դարձվածք է անհաշվելի զորքի համար: ՀՈԳՆԱԿԻՆ (ինչպես այստեղ) սա ուժգնացնում է շեշտադրում է (տես՝ 2 Օր . 33:2, 17, 1 Թագ . 18:7, Միքիա 6:7):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 3:7-8**  
<sup>7</sup>Ելի՛ր, ով ՏԵՐ, փրկի՛ր ինձ, ո՛վ իմ Աստված,  
 Քանի որ հարվածեցիր իմ բոլոր թշնամիների այտուսկրին,  
 Փշրեցիր անաստվածների ատամները:  
<sup>8</sup>Փրկությունը ՏԻՐՈՋՆ է,  
 Քո օրհնությունը Քո ժողովրդի վրա է: Սեյա:

- 3:7** Այս համարը սկսում է երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ (այսինքն՝ աղոթքի խնդրանքներով):
1. ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, կիրառված ՅԱՀՎԵՆ գործելու համար թախանձելու իմաստով. տես՝ Թվոց 10:35, Սաղմ . 7:6, 9:19, 10:12, 44:26, 68:1, 74:22, 82:8, 132:8, ինչպես որ թշնամիները «վեր ելան», այժմ սաղմոսերգուն կանչում է ՅԱՀՎԵՆ ելնելու՝ վեր կենալու (այսինքն՝ Իր գահի վրայից):
  2. փրկի՛ր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որը ՀԿ-ում մատնանշում է ազատագրում փորձություններից, ցավերից, այս կյանքի խնդիրներից (Սաղմ . 3:8):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ տերմին)**  
**SPECIAL TOPIC: SALVATION (OT Term)**

Այս տերմինը (BDB 447, KB 446, թե՛ ԱՐԱԿԱՆ և թե՛ ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ), որը հիմնականում նշանակում է «լայն ու ընդարձակ լինել» կամ «ազատ լինել», ունի մի քանի նշանակություն՝

1. ապահովություն՝ 2 Թագ . 22:3, Հոր 5:11, Սաղմ . 12:5
2. բարեկեցություն, բարգավաճում՝ Հոր 30:15

3. աստվածային փրկություն, որն գերազանցում է թե՛ ֆիզիկական, և թե՛ հոգևոր ազատությունները  
ա. Ծննդ. 49:18  
բ. 2 Օր. 32:15  
գ. 2 Թագ. 23:5  
դ. Սաղմ. 3:2,8, 22:1, 35:3, 62:2, 69:29, 70:5, 78:22, 80:3, 89:26, 91:16, 106:4, 140:7  
ե. Եսայի 12:2, 33:2, 51:6,8, 52:7,10, 56:1, 59:11, 60:18, 62:1,11
  4. թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր ազատությունների գաղափարը հստակ առկա է Հովնան 2:9-10-ում:
  5. հաղթանակ՝ Ելից 14:30, 15:2, 1 Թագ. 14:45, Սաղմ. 20:6, 21:5, 44:4-5, 68:19-20, 118:14, 15, 21, Եսայի 12:2, Ամբ. 3:8
  6. հաճախ «ցնձար» կապված է ՅԱՀՎԵԻ փրկության հետ՝ 1 Թագ. 2:1, Ես. 25:9, 26:1, Սաղմ. 9:14, 13:5, 21:1, 35:9, 118:15,21
- Փրկությունը բովանդակում է ՅԱՀՎԵԻ Իր մարդկային էակների հետ սկզբնական նախատեսված փոխհարաբերության և միաբանության իրագործում: Այն ներառում է անհատական և հասարակական ամբողջականություն:

❖ **«հարվածեցիր... փշրեցիր»** ՅԱՀՎԵՆ ազատագրում է բերում բռնությամբ վարվելով սաղմոսերգուի թշնամիների հետ:

1. հարվածեցիր – BDB 645, KB 697, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. փշրեցիր – BDB 990, KB 1402, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ

«Այտոսկրը» (BDB 534 I) և «ատամները» (BDB 1042 I) դարձվածքներ են ամոթի և պարտության (տես՝ 3 Թագ. 22:24, Հոր 16:10, Սաղմ. 58:6, Միքիա 5:1): Դա հատկապես վերաբերում է նրանց ատելության խոսքերին (տես՝ Սաղմ. 3:2):

**3:8** Սաղմ. 3:8-ում ԲԱՅԵՐ չկան: Հաճախ աստվածաշնչյան երբայերենի «լինել» ԲԱՅԸ հասկացվում է ընթերցողի կողմից:

❖ **«Սելա»** Տե՛ս Սաղմոս 3:2-ի գրառումը:

**3:9** Նկատե՛ք, թե ինչպես է անհատական ողբը կիրառվում արտացոլելու հավաքական՝ բոլորի անհանգստությունը (այսինքն՝ «Քո ժողովուրդը» Սաղմ. 3:9, Սաղմ. 25:22, 28:9): ՅԱՀՎԵՆ բերում է փրկություն՝ ազատագրում, ոչ միայն անհատների, որոնք խնդրում են, այլ այն ազգին, որ խնդրում է (այսինքն՝ 2 Մնաց. 7:14):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են թշնամիները:
2. Ինչո՞ւ են նրանք մերժում ՅԱՀՎԵԻ փրկությունը:
3. Ի՞նչ է նշանակում «ելիր» ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ:  
Որո՞նք են դրա հնարավոր հիմքերը:
4. Ի՞նչ է նշանակում «Սելա»: